



№ 3.

ԳԱՂՏԵԻ

Տ Պ Ա Ր Ա Ն

1894

Գ Ա Պ Տ Ն Ի Տ Պ Ա Ր Ա Ն

Կազմակերպել գաղտնի տպարան, բռնակալութեան դէմ կռիւող ազատ մտքին տալ մի այնպիսի զօրեղ զէնք, որպիսին տպագրական խօսքն է, ահա այս է եղել բոլոր յեղափոխական կազմակերպութիւնների տենչալի ցանկութիւններից մէկը, հենց որ նրանք իրանց մէջ դժեւ զգացել որ և է լուրջ բան սկսելու:

Գեռ 60-ական թւականներին, երբ նոր սկսեցին երևան գալ գաղտնի ընկերութիւններ, որոնց ձգտումն էր ժողովրդական յեղափոխութիւն առաջ բերել, մենք տեսնում ենք տպարանի նման բաներ, որոնք, սակայն, իրենց գոյութիւնը մի երկու շաբաթ հազիւ էին կարողանում պահպանել:

Պարզ է, որ արտասահմանեան ազատ մամուլն անկարող էր բաւարարութիւն տալ բուն երկրի մէջ գործող կուսակցութեան պահանջներին, չը նայելով, որ այդ մամուլի գլուխն էր Գերցենի նման մի գրող:

Վերջին 10-15 տարիներում, երբ շարժումը ձեռք բերեց մինչև այդ ժամանակ չը տեսնված դժ ու ծաւալ, Շվեյցարիայում և Լօնդօնում բանող ազատ տպարանների անբաւարարութիւնն օրէցօր ակնյայտնի էր լինում և դորա հետ միասին տեղական գաղտնի մամու-

լի կարիքը, որ կարող լինէր անյապաղ պատասխանել օրուայ ամեն չարիքներին, առաւել և առաւել ստիպողական էր դառնում: Ահա թէ ինչու արագ կերպով իրար յաջորդող յեղափոխական կազմակերպութիւններն աշխատում էին ունենալ իրանց սեփական տպարանը: Բայց, կարծես, մի չար ոգի խանգարում էր այդ փորձերին. բոլորն էլ երեւան էին գալիս և անհետանում, ունենալով շատ կարճ կեանք: Ոստիկանութիւնը գրտնում էր տպարանների տեղը, նախ քան նրանք որ և է բանով կարողանում էին իրանց գոյութիւնը ցոյց տալ:

Այսպէս՝ Կարակոջոյցիների տպարանը հազիւ մի քանի ամիս տևեց: Նեչայեցիները նոյնպէս սարքեցին իրանց տպագրական մեքենան, բայց ստիպված էին միշտ գետնի տակ թաղված պահել, մինչև որ ոստիկանութիւնը լոյս աշխարհ հանեց, կազմակերպութեան ոչնչանալուց յետոյ: Գոլգոթինցիների տպարանը բռնվեցաւ առաջին և միակ 2 թերթիկները դուրս տալուց անմիջապէս յետոյ: Չայկովցիները շատ անգամ փորձեցին և մինչև անգամ արդէն տառեր և մի հիանալի մեքենայ էին ձեռք գցել. բայց նրանց երբէք չըստջողվեց գործին ձեռք զարկել. ամբողջ 5 տարի տպարանական բոլոր իրեղէնները մի չարգախում վեր էին թափված առանց գործածութեան:

Իսկապէս մի երկրում, ուր ամեն մի քայլափոխիչ հետևում են, ուր աւելի շատ ոստիկանական լրտեսներ կան, քան բնակիչներ,՝ գաղտնի տպարան հիմնելու դժուարութիւնները մարդ թէ չէ համարեա անյաղթելի,

որովհետև այդ գործի նոյն իսկ մասնաւոր բնաւորութիւնըն այդպէս է: Կարելի է ծածկել զբերք, լրագրներ, նոյն իսկ մարդկանց, բայց ի՞նչպէս թագցնել տպագրական մեքենան, երբ նա իր աղմուկով մատնում է իրան, երբ այդ աշխատանքը շատ բարդ է և պահանջում է բաւական թւով մարդիկ, ահագին քանակութիւն անտիպ և տպած թղթերի անդադար տեղափոխութիւն և այլն:

Մէկը միսի յետևից դառն անաջողութիւնների հանդիպած բազմաթիւ փորձերից յետոյ, գաղտնի տպարան սարքելու գործը բոլորի կողմից ընդունվեց ոչ միայն շատ շատ դժուար, այլ և բոլորովին անհնարին մի գործ, մի դատարկ ցնորք, որ ի գուր տեղը պատճառ է դառնում փողի և ամենալաւ ոյժերի կորստեան: Գաղտնի տպարանի միտքը բոլորովին թողնվեցաւ: "Աւրջ" մարդիկ այդ բանի մասին լսել անգամ չէին ուզում:

Բայց գանվեց մի ցնորասէր, որ երբէք չէր ուզում ընդհանուր կարծիքի հետ հաշտվել և տաք տաք խօսում, ապացուցանում էր, որ նոյն իսկ Պետերբուրգի մէջ կարելի է տպարան սարքել և որ հենց ինքը գլուխ կը բերէ, եթէ հարկաւոր միջոցները տան իրան:

Այդ մարդու անունն էր Ահարոն Զոնդեկելիչ. նա Վիլնեյի էր, մի հասարակ հրէա խանութպանի որդի: Նա անգամ էր մի կազմակերպութեան, որ յետոյ ստացաւ "Հող և Ազատութիւն" անունը: Այդ կազմակերպութեան մէջ շատերը ծիծաղում էին Զոնդեկելիչի ծրագրի վրա և համարում նրան մի անողնելի լատետես (օպոխիստ):

Բայց չրի կաթիլը քարն էլ է մաշում: Շատ ջանքերից յետոյ Ձունդեղեղիչին յաջողվեց յաղթել իր ընկերների անվստահութիւնը և ստանալ իր մտադրութեան համար մօտ 4000 ու այդ փողերով նա գնաց արտասահման, գնեց բոլոր անհրաժեշտ իրերը և հասցրեց Պետերբուրգ: Այստեղ նա սովորեց գրաշարութեան արհեստը, սովորեցրեց իր ընկերներին և վերջապէս 1877 թիւն հիմնեց Պետերբուրգում գաղտնի տպարան, առաջին տպարանը, որ արժանի էր այդ անունը կրելու, որովհետեւ կանոնաւոր կերպով գործում և լոյս էր ընծայում բաւական լաւ գրքոյկներ, իսկ վերջերում նոյն իսկ լրագիր:

Ձունդեղեղիչի ծրագիրն այնքան պարզ, բնական և խելացի էր, որ ոստիկանութիւնը, չընայելով իր բոլոր եռանդուն խուզարկութեան, 4 տարի շարունակ չքննարկեց և հետքը գտնել, մինչև որ մի յիմար պատահմունք գաղտնիքը բաց արեց. սխալմամբ անօրէն եւրոյն իրար խառնելով, ոստիկանութիւնը յանկարծ եկաւ մտաւ այն տունը, ուր տեղաւորված էին տպագրական մեքենաները:

Տպարանը ոչնչացաւ, բայց դրա կորուստը ծնեցրեց ուրիշները, որոնք նոյն ձևով էին սարքվում և գործը շարունակ առաջ տանում:

Եւ ահա այդ ժամանակներից սկսած երբեմն երբեմն անյայտ անկիւններից, խոր գաղտնատեղերից որոտում էր կարող և ահաւոր ձայնը, որ տարածվում էր ծովից ծով, ամբողջ երկրի երեսով, խլացնելով կեղծա-

ւորների ստրկական թոթովանքները և շողորթութների վայրենի ունեցները: Եւ ուրախ թրթռում են կռուողների սրտերն այդ ձայնից, դողում է բռնակալն իր անմատչելի պալատի մէջ, որովհետեւ զգում է, որ իր դէպքին վերջ, ոտքի է կանգնել մի մեծ ոյժ, որի առաջ կը ցրվին իր լեզուները և կը խորտակվին իր բոլոր ամբողջութիւնները: Սա ազատ մտքի ոյժն է, սա ժողովրդեան բարիքի համար մարտնչող անձնազոհների ոյժն է, սա սիրոյ և ճշմարտութեան ոյժն է:

Այդ ոյժը գինվեց հրով և գինամիտով ու յորձանք տուեց դէպի կեանքի և մահուան կռիւ, որը կը վերջանայ միայն բանակալութեան խորտակմամբ: Ահա այս փառաւոր պատերազմում գաղտնի տպարանն այն դրօշակն էր, որի շուրջը եռ էր գալիս ամենակատաղի կոտորածը, և որին ուղղված էին բոլոր մարտնչողների անհանգիստ հայացքները: Քանի ծածանվում էր այդ դրօշակը, քանի դեռ թշնամիների բոլոր ջանքերը չէին կարողանում խլել նրան պաշտպանների ձեռքից, ոչ ոք չէր տիրում, չէր յուսահատվում կուսակցութեան գործունէութեան և վիճակի վերաբերմամբ, մինչև իսկ ամենադաժան զժրաջողութիւնների ու կորուստների ժամանակ:

Բայց ի՞նչպէս բացատրել գաղտնի տպարանի գոյութեան փաստը, այն էլ Ռուսաստանի պէս մի երկրում: Սա բացատրվում է միայն գործողների ծայրայեղ անձնուիրութեամբ և այն չափազանց խոհեմութեամբ ու զգուշութեամբ, որ գործ էին դրվում տպարանը դա-

նազան պատահմունքներին ազատ պահելու համար:

Ոչ որ չէր գնում այնտեղ. ոչ որ չէր իմանում նոյն իսկ թէ որտեղ են նրանք տեղադրված, բացի գործում եղող ամենաանհրաժեշտ մարդկանցից: Զգուշութիւնը հասնում էր մինչև այն աստիճանի, որ ոչ միայն տպարանատէր կազմակերպութեան անդամները, այլ և լրագրի նոյն իսկ խմբագիրն ու աշխատակիցները չէին իմանում նորա տեղը: Սովորաբար նրանցից միայն մէկն էր գաղտնիքին մասնակից լինում և յետոյ միայն նա էր պահպանում բոլոր յարաբերութիւնները՝ զգուշանալով որքան կարելի է, անձնական այցելութիւններից:

Երբ ես մասնակցում էի "Հող և Ազատութիւն" թերթի խմբագրութեան մէջ, այդ դերն ինձ ընկաւ: Մեր յարաբերութիւնները տպարանի հետ տեղի էին ունենում չեզոք, ամենայնուայն էլ տեղեւոր: Այնտեղ ես յանձնում էի ձեռագրները, վերցնում սրբագրութեան թերթերը և նշանակում հետեւեալ տեսակցութեան տեղն ու ժամանակը: Որ և է չը նախատեսած պատահմունքի կամ անձնական յարաբերութիւնների անհնարին եղած ժամանակը սովորաբար մի բաց նամակ էի ուղարկում, պայմանական բառերով նշանակելով հետեւեալ տեսակցութեան պայմանաժամը:

Միայն մի անգամ ես առիթ ունեցայ անձամբ տպարան գնալ, ահա թէ ինչ պատճառով:

Նոյեմբերի 30-ն էր, այն օրը, երբ պէտք էր գուրս դար մը լրագրի առաջին համարը: Առաւօտեան ինձ մօտ եկաւ Ալէքսանդր Միխայլովը և պատմեց, որ ին-

քը, գործով Տրօչանսկու մօտ գնացած լինելով, քիչ էր մնացել, որ ժանդարմների սարքած ծուղակն ընկնէր և աղաղակել է շնորհիւ իր ճարպկութեան ու հնարագիտութեան. այն ժամանակ, երբ ոստիկանների մի ամբողջ նախիր ետեւից ընկած, ըղաւելով, աղաղակելով, վազելիս են եղել, ինքն էլ է սկսում "բռնեցէ՛ք, բռնեցէ՛ք" ըղաւել և ձեռքով դէպի առաջ ցցոյց տալ. սրանով կարողանում է շփեցնել թէ ամբոխին և թէ ոստիկաններին, որոնց մօտով փախչելիս է եղել:

Ես սաստիկ ուզում էի այդ լուրը տեղադրել լրագրի համարում, ղեկավարապէս այդ ժամանակուայ քաղաքապետ Զուբովին բարկացնելու նպատակով, որը երգվում էր, թէ տպարան չի կարող գոյութիւն ունենալ Պետերբուրգի մէջ, հակառակ դէպքում ինքն անպատճառ կը գտնէր:

Ահա այդ դէպքից ես օգտուեցի և անձամբ այցելեցի մեր տպարանը, ծանօթացայ գրաշարների հետ, որ վաղուց գրաւում էին իրենց օրը:

Տպարանը տեղադրված էր 'Նիկօլայեվսկայա փողոցում', Նիկօլսկի պրօսպեկտից երկու քայլ հեռու: Ամեն տեսակ զգուշաւոր միջոցներով ես հասայ բնակարանին և պայմանական կերպով զանգահարեցի: Դուռը բացեց Մարեա Արիլօվան: Ես ներս մտայ մի այնպիսի երկիւղածութիւնով, որպիսին զգում է հաւատացեալը սրբազան տաճարի շէմքը կոխելիս:

Տպարանում աշխատում էին չորս հոգի. երկու տղամարդ, երկու կին: Տանտիրուհին, Մարեա Արիլօվան, որ

45 տարեկան մի կին էր, կուսակցութեան ամենահին և ամենաարժանաւոր անդամներից մէկն էր. նա դատի էր ենթարկվել գեռ Վարակօզօվի գործի պատճառով և արքորվել Տիսիսային նահանգներից մէկը: 1874 թին նրան յաջողվել էր փախչել արքորից, այդ ժամակուսնից նա դարձել է "ոչ-օրինական" և չէ դադարել ամեն կերպ աշխատել յօգուտ յեղափոխութեան մինչև 1880 թիւը, երբ նա ձերբակալվեց մի գաղտնի տպարանում, ինչպէս մի պարտաճանաչ զինւոր: Այսպէս, նա 16 տարի շարունակ մնաց յեղափոխականների շարքերում, անխոնջ կերպով աշխատելով ամենապարկեշտ և մի և նոյն ժամանակ ամենավտանգաւոր դերերում: Նա աշխատում էր բոլոր տպարաններում, սկսած ամենաառաջինից, և ամենալաւ գրաշարներից մէկն էր, չը նայելով, որ արագ զարգացող կարծատեսութեան պատճառով նա համարեա ոչինչ չէր տեսնում:

Գենեքալի որդի և սենատօրի քրոջ որդի, Վասիլի Բուխը, ապրում էր Սրիլովայի մօտ, իբրև տնւոր: Նա ձեռք էր բերել մի նախարարութեան մէջ ծառայողի անցաթուղթ և ամեն օր, որոշ ժամին, դուրս էր գալիս տնից հսկայական պօրտֆէյլը թւի տակին, որով տանում էր լրագրի համարները և բերում տպագրելու թուղթը: Սա մի 26-27 տարեկան երիտասարդ էր՝ գունատ, նուրբ, արիստօկրատիական դէմքով և այն աստիճանի լուսկեաց, որ երբեմն ամբողջ օրերով բոլորովին բերան չէր բաց անում, ահա հենց նա էր արտաքին աշխարհի և տպարանի հետ միջնորդութիւն անողը:

Այդ բնակարանի բնակիչներից երրորդի անունը մինչև վերջը անյայտ մնաց ինձ համար: Արդէն 3 տարի նա կուսակցութեան շարքերումն էր և վայելում էր ընդհանուր սէր ու յարգանք: Բայց նրա իսկական անունը ոչ ոք չը գիտէր, որովհետև նրան կազմակերպութեան մէջ մտցնողն արդէն մեռել էր, իսկ միւս բոլոր ծանօթները կոչում էին "թուչիկ"՝ իր բարակ ձայնի պատճառով: Երբ տպարանը, ուր նա աշխատում էր, շրջապատվեց և չորս ժամ յուսահատական կռից յետոյ ստիպված եղաւ անձնատուր լինել, ու զինւորներն սկսեցին ներս խուժել՝ նա արթնանալի մի հարուածով վերջ տուեց իր կեանքին, ահա այդպէս անանուն ապրեց նա և անանուն էլ գերեզման իջաւ...

Նրա զրութիւնը տպարանի մէջ համարեա ամենածանրն էր: Բանը նրանումն է, որ զգուշութեան համար նա երբեք չէր գրվել ոստիկանատան ցուցակներում, որովհետև նոյն իսկ ամենականոնաւոր անցաթուղթն անգամ մի փոքրիկ վտանգ էր ներկայացնում: Դրա համար էլ նա ստիպված էր ամբողջ ամիսներ թաղնվել և քիթն անդամ ցոյց չը տալ, որ գոնապանի աչքին չընկնի: Ընդհանրապէս բոլոր գաղտնի տպարաններում աշխատողները կտրում էին իրանց կապերն արտաքին աշխարհի հետ և զուտ ձգնաորական կեանք անցկացնում: Բայց խեղճ "թուչիկն" ստիպված էր փակվել չորս պատերի մէջ մշտապէս, ինչպէս մի կալանաւոր: Նա մի երիտասարդ մարդ էր, 22-23 տարեկան, բարձրահասակ, բարակ, նիհար դէմքով, թուխ թուխ մազերի քուլա-

ները երեսի շուրջը թափթփած, որով նրա երեսի մե-
ռելային գոյնն աւելի խիստ էր աչքի ընկնում: այդ մե-
ռելային գոյնը հետեանք էր արևի լոյսի և թարմ օդի
պակասութեան ու արձձի փոշու թուխաւոր ազդեցու-
թեան: Անդանի էին մնացել միայն նրա նշնիկի խո-
շոր, սևորակ աչքերը, որ անվերջ բարութիւն ու տըխ-
րութիւն էին արտայայտում: Նա բարակացաւ ունէր-
ինքն էլ այդ գիտէր- բայց էլի չէր ուզում թողնել
իր գործը, որովհետեւ հմուտ գրաշար էր, և մի ուրիշ
էլ չեկար, որ կարողանար նրան փոխարինել:

Չորրորդ շարողը մի աղջիկ էր, որ ապրում էր, իբրեւ
Արիօփոյի աղախին: Նա մոռացել եմ նրա ազգանունը:
Սա մի դուրեկան դէմքով շիկահեր օրիորդ էր 18-19
տարեկան, կապոյտ աչքերով: Նրան կարելի էր շատ
գեղեցիկ համարել, եթէ նրա դունատ գէմքի վրաից
երբէք վայր չիջնող մշտական ջղային ծանր ու ճնշող
լարված դրութիւնը չըլինէր: Արածես նա լինէր կեն-
դանի արտայայտութիւն այն բոլոր դժոխային անընդ-
հատ տանջանքների, որոնց ենթարկվում են այդ տե-
ղերում կեանք մաշեցնող մարդիկն, ամեն մի ժամ, ամեն
մի րոպէ անխուսափելի կորուստն աչքի առաջ ունե-
նալով:

Սովորական հարց ու բարենեւրից յետոյ ես բացատրե-
ցի իմ այցելութեան նպատակը և հարցրի, թէ արդեօք
չի կարելի այս համարում տեղաւորել Միխայիլի հետ
պատահած ծիծաղաշարժ դէպքի լուրը: Ինձ պատաս-
խանեցին, որ կարելի է բոլորին իմ առաջարկութիւնս

գուր եկաւ: Մենք իսկոյն գործն սկսեցինք: Համարն
արդէն շարված էր և ստիպված էինք մի բան դուրս դնել,
որ պատրաստածս լուրի համար տեղ բացվի: Ինձ ման
ածեցին բոլոր սենեակները և բացատրեցին, թէ ինչ-
պէս են գործում: Տպարանը բոլորովին բարդ չէր. մի
քանի տպարանական կասսաներ զանազան տեսակ տա-
ռերով լցված, մի փոքրիկ գլանակ, մոյգ-գեղնազոյն ա-
ռաձգական նիւթից ձուլված, որ շատ նման է սոսնձի
ու մի քիչ էլ քաղցրահամ է. մի մեծ, ծանր գլան, մա-
հուրով ծածկված, որ ծառայում էր իրրեւ մամուլ. զամ
բերդի մէջ լցված մի քանի թանաքոտ սպունգներ և վըր-
ձիներ. 2-3 աման տպագրական թանաք: Ամեն ինչ-
այնպէս էր դասաւորված, որ քառորդ ժամում կարելի
էր անկիւնում դրած մեծ պահաշանի մէջ հաւաքել և
ծածկել: Ինձ բացատրեցին գործի տեխնիկական կողմը
և պատմեցին մի քանի մանրիկ խորամանկութիւններ,
որ իրանք գործ են դնում ամենայն օր ջուր, փայտ և
այլն բերող դոնապանի սրտից կասկածը հանելու հա-
մար: Հիմնական կանոնն էր՝ թաղ չը կենալ, չը ծածկել,
այլ ընդհակառակն, ամեն բան, ամբողջ տունը, որքան
կարելի է, շուտ շուտ ցոյց տալ նրան: Շարողներն աչ-
կարելի է, շուտ ամեն դէպքից օգտվել և դոնապանին
խառում էին ամեն դէպքից օգտվել և դոնապանին
թողնել ներսի սենեակները մտնելու, ի հարկէ առա-
ջուց ամեն մի կասկածելի բան այնտեղերից հաւաքելով:
Երբ մահանայ չէր լինում, իրանք էին հնարում: Այս-
պէս, երկար ժամանակ չէին կարող մի պատճառ հնա-
րել, որ նրան ամենայնաւոր սենեակներից մէկը մտցնե-

ին, ցոյց տային: Աւերջապէս Արիւօվան մի անգամ շտապով վազում է և դռնապանին իմացնում, որ այս ինչ յետին սենեակը մուկ է մտել, պէտք է ստակեցնել: Դռնապանը գալիս է, ի հարկէ մուկ չէ գտնում, բայց գործն արդէն կատարված էր. նա արդէն բոլոր սենեակներում եղել էր և միշտ կարող էր վկայել, որ ոչ մի կասկածելի բան չի տեսել: Ամիսը մի անգամնա՞ պատճառ սենեակների համար յատակ մաքրող էկան նրաում:

Գրաշարներն ուրախ ուրախ չհանաներ էին անում և ծիծաղում, յիշելով իրենց բոլոր խորամանկութիւնները, բայց ես ծիծաղելու սիրտ չունէի...

Միտաս արիւնով լցվեց, երբ այդ մարդկանց տեսայ: Ահա՛մայ համեմատեցի նրանց զարհուրելի կեանքը մերինի հետ և ես ամաչեցի: Մեր բոլոր գործունէութիւնը տեղի էր ունենում օր ցերեկով, արեւի լոյսի տակ, կուփ գրգռիչ պարագաներում, ընկերների, բարեկամների շրջանում... և միթէ սա իսկապէս տօն չէր, համեմատելով այն իսկական տաժանակիր գոյութեան հետ, որին կամովին մատնում էին իրանց այդ մարդիկը, իրենց տըխուր, մութ բներում...

Մենք մնաս բարով արինք: Ես դանդաղ կերպով իջայ սանդուխտներով և փողոց դուրս եկայ գրգռված, աւելո՞ծված: Ամեն տեսակի իրար հակառակ մտքեր խռնվում էին գլխումս: Ես մտածում էի այդ մարդկանց մասին, յեղափոխական կուռի մասին, որի համար նրանք այդպէս անդարձ կերպով զոհում էին իրանց, ես մտածում էի մեր կուսակցութեան մասին...

Յանկարծ մի միտք փայլեց գլխումս, որ պարզեց իմ ալեկոծութիւնս: Արդեօք դրանք, այդ բարձր-անձնազոհ անհատները չե՞ն մեր կուսակցութեան իսկական ներկայացուցիչները. այդ տպարանը չէ՞ արդեօք ուսական ամբողջ յեղափոխական կուռի կենդանի արտայայտութիւնը: Մինչև այժմ ինձ ճնշող զգացմունքին բոլորովին հակառակ մի նոր զգացմունք բորբոքվեց իմ կրծքում. ո՛չ, մենք անյաղթելի ենք, մտածում էի ես, քանի դեռ չի չորացել, չի ցամաքել այս անանուն, համեստ հերոսութեան ակունքը, որ վեր է, որ բարձր է ամեն տեսակ հերոսութիւններից: Մենք անյաղթելի ենք, քանի դեռ ունենք այդ տեսակ մարդիկ...

ՀՀ Ազգային գրադարան



NL0737100

2007

1
387

1

387